

ՀԱՅ ԷՋԵՐ

ՏԱՀ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

ՎԱՍՆ ՍԻՐՈՅ

●—●

Ես քո սիրուն չեմ գիմանար, հալալ արա՛, հանաք մեռայ՝
Ա՛ռ ի հետ այլ զոսկի փէստա, եւ եկո՛ւ փորէ՛ ինձի թուրպայ:

Թող զիս երեն տառայալուով, որ իմ սրտիս բողբն գոռայ՝
Շատ մարդ ի յայս կըրտկն ընկնի, չորն երի՛ գալարն ի վըայ:

Թող լըվանան ըզիս գինով, մարուպ բերեն ինձ քանանայ,
Կանանչ տերեւ թող պատենն, տանին թաղեն ի նոր պաղչայ:

Հե՛յ հարամի ու մարդըսպան, ճալատն ի քովդ աչկերտ կուգայ՝
Շատ զըրբեր ես սիրուն զնտան, գուռդ ու զըրունք է դանաբայ:

Զսիրտս երեցիր ու սզկեցիր, ցւ քաշեցիր աչքըդ սուրմայ՝
Դարձար զարիւնըս վաթեցիր, 'ւ ի սուրնուդ զըրբի հինայ:

Քարկոծեցէք զիս խնձորով, քաղցըր լեզվով խոցոտեցայ՝
Անուշ գինով զիս խեւ արբի, որ ի ծոցըդ զընտանեցայ:

Աս գիշեր ի յերազիս կըտըրտեցին տիքայ տիքայ,
Դադանք արիւնըս կըչտացան ու թռչունքն ի լաչիս վըրայ:

Վըրտա բերան է առիւծու, արիւնըս զէս քուր կը բխայ,
Ով արիւնէս է ծարաւեր, թող գայ խըմէ որ լիանայ:

Կըտընվորացն յոտիցն ի հող, մէկ հոգեկ մը ունիմ ֆիտայ՝
Իմ ճիկեաքըս քապապ հերթք, արունըս թող գինի լինայ:

Գըլուխս ամպերն ի վեր իջիւր ի սլախս լեռներուն վըրայ,
Մաղձըն սրտիս մըշուշ կապեր, արեան արցունքս ցողայ:

Կերակրեցաք ի մի սեղան, ու խըմեցաք ի մի կթիայ,
Մէկտեղ ելաք, մէկտեղ նըստաք, ան ժամանակն ո՛ւր է հիմայ:

Ծո՛ւր է դավլըդ, ո՛ւր է երգունիմ, որ բռնեցաք զվստուած վըկայ՝
Ի զատ ընկաք օտարացաք, չարկամն եղեւ մեզ մահանայ:

Ատուած մեր չարկըմին չար տայ, որ իւր չարովըն լիանայ
Բարեկամացըն տայ բարի, մեր բանն ալվայ բարի լինայ:

Ատուած ճամբայ տայ իմ սրտիս, ծառըն ծաղկի ու կանչանայ,
Կամ իմ սրտիս ծառըն բուսնի, ձագըն խոսի ու ճըվըտայ:

Համբերելով գործք կատարի, հեւ Ռովհաննէս, զու համբերէ՛,
Ատեն չինի գայ իւր կամաւ գինչ հեռաւոր զինք չամբուրէ:

(Ս. Ղազարու վանք, Տաղարան քիւ 1339)

ՆԱԴ. ՄԵՌՈՒՆԻ ԱՍՍԱՑԵԱԼ

Յերէկ հողվերօքն անցի
 Հոտ ոտի գլխմարն կ'սփուցի .
 Գայլ մ'երկուք յատալ զ'անցի .
 Նեղ ու խոր զնտան մի անսի .
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Մահուկ մի պառկած անսի .
 Գեղեցիկ ու խիստ նազելի .
 Հարցուկս նորա եղայ
 Ի՞նչն կ'ընես, այց քեզ ի՞նչ տեղի :

Դարձաւ ու ճուղապ երեւ .
 Թէ՛ կանգնեա՛ց, կտրիճ զովելի .
 Ես այլ քան ըզքեզ էի
 Գեղեցիկ եւ այլ ցանկալի .
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Ուտէի 'ւ անուշ խմէի
 Ու մահու կարծիք չուէի .
 Յանկարծ ցաւըն զիս էառ .
 Ես ի յիս յաճապ մընացի :

Յանկարծ ի մահին անկայ .
 Թուլցաւ բնութիւնս որ ունի .
 Ոչ խօսք մի խօսել կարի .
 Որ ճուղապ ուղեն նա տայի :

Այս իմ լուսատու աչերս՝
 Որ ցանկայր ամէն մարդ ինծի .
 Հանց է կուրացեր հիմի
 Որ բնաւ իսկի չնայի :
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Այս իմ զօրաւոր բաղուկս՝
 Հանց ուժով ես խիստ գիտէի .
 Հանցեղ թուլացեր յստմուս .
 Որ բընաւ իսկի չի շարժի :
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Իմ ճարտարախօս լեզուս
 Որ զամէն մարդ զարմացնէի .
 Հանց է կապեր կարկամեր
 Որ բնաւ իսկի չի խօսի .
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Զինչ որ բարեկամ կայր ինձ,
 Գոյր, եղբայր եւ այլ սիրելի,

Ժողովան 'ւ ի բողոքս եկին՝
 «Ա՛յ եղբայր, ի՛նչ տեղ կու ցաւիս :

Կապեր էք ճարտար լեզուս,
 Որ բընաւ ճուղապ չի տրվի .
 Ողորմ ինձ օգնել ուզէ,
 Զօգնեցին բնաւ մէկ մ'ընծի :

Հոգիս ի մարմնոյս ելաւ
 Ու մընաց մարմինս գտրելի .
 Այն իմ սիրելիքն ամէն
 Ողբալով եկին մօտ ինծի :
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Այն իմ քոյր 'ւ եղբայր եւ մայր
 Որ իւրեանցն էի ցանկալի ,
 Շուտով ինձ պատանք բերին ,
 «Թէզ հանէք որ խիստ չի հոտն» :

Ըզգինդն ականջէս առին .
 Մատանին որ խիստ սիրէի .
 Ըզկապան ի թեւէս հանին ,
 Թախեցին զինչ մէկ մի գերի :

Զորս մարդ չիս ի յուսն առին ,
 Ու տարան մղղուն մի հեռի .
 Այն իմ սիրելիքն ամէն
 Ողբալով եկին հետ ընծի .
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Դըրին զիս ի նեղ զընտան ,
 Խոր ու գէճ՝ որդունքն աւելի .
 Ըզհոգն ի վերաս առվին ,
 'Ի սասացին թ'ԱՅՆ՝ա՛ր քեզիցի» :

Խըրատ մի քեզ տալ կամիմ,
 Թէ լսես դու՝ իմ սիրելի .
 Թ'ապրիս դու հազար տարի,
 Երբ որ է՝ տի գաս մօտ ինծի :

Դընա՛ դու գործէ՛ բարի
 Եւ արա՛ թատպիւր դու քեզի .
 Խիստ օղորմելի է մարդն
 Որ մեղօքն ի հոգն իջանի :

Երթայ նա յանլուս խաւարն,
 Տարտարոս 'ւ ի հուք գեղեցի .
 Ոչ սուրբ բարեխօս լինի,
 Ոչ եղբայր եղբօրն օգնելի :
 Վա՛յ անձն իմ, եղո՛ւկ, հազար վա՛յ :

Հազար զինակար եղբայր,
Սա տանան ըղձեզ չի խաբէ՛.
Զմանուն օրն ի յետ ձգէ,
Հանց բռնէ որ մարդ շուարէ :

Թոյս յԱստուածածինն ունիմք,
Բարեխօս է նա մեզ բարի,
Որ իւր միածին որդին
Աղաչէ որ մեզ ողորմի,
Վա՛յ անձն իմ, եղբ՛ւկ, հազար վա՛յ :

Մըսքին Գերովբէ անխել :

Բառք է պաղ ու խօսքդ է քամի .
Թէ խիստ իմաստուն ես դու,
Նա արա՛ ճարակ դու քեզի .
Վա՛յ անձն իմ, եղբ՛ւկ հազար վա՛յ :

Գանի աշխարհի կացիր,
Զգործեցիր դու գործ մի՛ բարի .
Ըզփաստ աշխարհիս սիրեր
Որ կորուստ է քեզ 'ւամէնի,
Վա՛յ անձն իմ, եղբ՛ւկ, հազար վա՛յ :

(Ս. Ղազարու վանք, Տաղարան քիւ 1139)

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Նազուկ տիւզէր զալըմ քեափիր, սեւ աչեր, եա՛ր, սեւ աչեր .
Թէ՛ր չեո ի գար օրիկ մի զիս հարցաներ, եա՛ր, հարցաներ :

Շատ եմ քաշեր տէրտ ու դաճըր քեզ համար, եա՛ր, քեզ համար .
Սպիտակ ճարատ՝ բարակ ուներդ է կամար, եա՛ր, է կամար :

Աչերըդ ծով՝ ես եղայ խեղճ նաւավար, եա՛ր, նաւավար .
Ղարդ եմ եղեր՝ ծովուդ ելնել չեմ կարեր, եա՛ր, չեմ կարեր :

Գիշեր ցորեկ քունս է հատեր յաչերուս, եա՛ր, յաչերուս .
Հա՛ անօրէն, ականջ արա՛ քո գերուս, եա՛ր, քո գերուս :

Հէքիմ կ'ասեն զքեզ, դեզ արա՛ խոցերուս, եա՛ր, խոցերուս .
Այս կըրակիս ա՛լ չեմ կարեր դիմանար, եա՛ր, դիմանար :

Գիշեր ցորեկ քո սէրդ արեր զիս վարամ, եա՛ր, զիս վարամ .
Ա՛յ անօրէն, գէ՛մ քար չեմ որ դիմանամ, եա՛ր, դիմանամ :

Գունըս չի գար ելնեմ երթամ ձընանամ, եա՛ր, ձընանամ .
Երթամ լալով պահ մը շուրջ գամ, ալլվի գամ, եա՛ր, ալլվի գամ :

Գիշեր ցորեկ ես քո տէրաէն հառաչեմ, եա՛ր, հառաչեմ .
Կ'ուզեմ զանունդ այան կ'անչեմ, կ'ամաչեմ, եա՛ր, կ'ամաչեմ :

Այլ չեմ կարող գաղտուկ ապրիլ, կու կանչեմ, եա՛ր, կու կանչեմ :
Ա՛յ անօրէն, դու միտք արա՛, դէ՛մ քար չեմ, եա՛ր, գէ՛մ քար չեմ :

Ս. Ղազարու վանք, Տաղարան քիւ 356)